ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով «Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը վերսկսելու մասին առաջարկությունը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունվարի 16-ի ՍԴԱՈ-10 աշխատակարգային որոշմամբ «Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցվել է՝ մինչև վերոնշյալ որոշման մեջ նշված կասեցման հիմքերը վերանալը:

Սահմանադրական դատարանն ավարտել է սույն գործով պահանջված և ստացված նյութերի ուսումնասիրությունը, ինչի արդյունքում արձանագրում է, որ «Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու՝ 2024 թվականի հունվարի 16-ի ՍԴԱՈ-10 աշխատակարգային որոշմամբ սահմանված հիմքերը վերացել են:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը վերսկսել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

21 նոյեմբերի 2025 թվականի
ՍԴԱՈ-170